

ծանօթ Խոջայ Նազար, 1628ի վերջերը, երբ Մովսէս վարդապետ Սպահան կը գտնուէր 100 թուման հարկը բառնալու համար Շահ Սէֆիի շնորհքը խնդրելու, խնդրոյն կատարուելէն ետքը, փութաց դնել Շահին առջեւ նաեւ կաթողիկոսական հարցը. «Այս այս մեծաշուք եւ փառաւոր լիցի մեզ կաթողիկոս եւ խալիֆայ» խնդրեց Շահէն Խոջայ Նազար, «որ ունէր բազում համարձակութիւն առաջի թագաւորացն Պարսից»։ Սիրով ընդ առաջ եկաւ Շահը հայ ժողովրդեան փափաղին. «առժամայն ոսկի մատանեաւ կնքեալ ետ հրաման, թէ Սա լիցի առաջնորդ ազգին Հայոց. եւ որպէս կամեսցի այնպէս վարեսցէ զհայրապետական իշխանութիւն իւր» (Ղ. Գառնեցի)։ Այս կարեւոր գործին ալ յաջողութեամբ ի գլուխ ելլելէն ետքը «մեծաշուք հրամանաւ արձակեցաւ Մովսէս ի բռնակալ արքայէն» եւ բարեաւ վերադարձաւ Էջմիածին եւ ողջունուեցաւ ցնծութեամբ։

Գրիգոր Դարանաղցի հայ ժողովրդեան ողբերութիւնը ցոյց կու տայ երբ կը գրէ թէ «Եւ որք լուան՝ ուրախ եղեն յոյժ, եւ աստուածային ընտրութեամբն եւ աշխարհազումար ժողովով՝ վարդապետօք եւ եպիսկոպոսօք եւ բազմախումբ կրօնաւորաւք եւ բազմամբօխ քահանայիւք եւ ժողովրդօք ձեռնադրեցին կաթողիկոս եւ նստուցին յաթոռ սրբոյն Գրիգորի»։

Ղուկաս Գառնեցւոյ համաձայն, որուն